«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Զարուհի Նիազյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 116 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……2-3

Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի կազմակերպման գիտական նախադրյալները……..……4-6

Ուսուցման գործընթացում գերակայող արժեքներ.....7- 14

Եզրակացություն……...……15-16

Օգտագործված գրականության ցանկ……..…17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում են նաև արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայկական դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը,

այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդություններում են վառ կերպով արտացոլված մեր ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Այդպիսով, մեր կողմից քննարկվող հիմնախնդրի նպատակն է ներկայացնել, թե ինչպիսի արժեքներ կարող են գերակայել ուսուցման գործընթացում, և որ արժեքներին են հաղորդակցվում դպրոցականները:

Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի կազմակերպման գիտական նախադրյալները

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ:

Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը երկկողմանի բնույթ ունի, այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը, և այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:

Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

Ինչպես գրում է Ն.Օ. Լոսսկին. «Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները գոյություն ունեն անթիվ քանակով»[1, էջ 32]:

Փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական հետազոտություններում (Վ.Պ. Տուգարինով, Ս.Ֆ.Անիսիմով, Մ.Ս.Կագան) մշակվել են արժեքների համակարգային բազմաթիվ տարբերակներ, որոնք ընդգրկում են հնարավորինս մեծ թվով արժեքներ:

Ըստ Բ.Ս.Գերշունսկու՝ մանկավարժ հետազոտողների խնդիրն է համամարդկային արժեքների վերափոխումը այնպիսի արժեքների, որոնք ձեռք են բերվում կրթության ոլորտում [2]:

Վ.Պ.Զինչենկոյի, Ն.Ս.Ռոզովի, Ս.Ի. Մասլովի կողմից փորձեր են արվել հետազոտություններում դիտարկված արժեքները դասակարգել ըստ որոշակի մոտեցումների:

Վ.Պ.Չինչենկոն անձի գործունեության երեք հիմնական բնագավառների առանձնացման հիման վրա առաջարկում է մանկավարժական գործընթացում իրականացվող հետևյալ արժեքային խմբերը [3, էջ 8]՝

- Հոգևոր
- Իմացական
- Սոցիալական

Գիտնական-հետազոտողն այն համոզմանն է, որ դրանք կրթության համակարգում պետք է ստանան տեխնոլոգիական կիրառում: Սակայն այդ խնդիրը դժվար է իրականացնել այնպիսի բնութագրիչների բացակայության պատճառով, որոնք վերաբերում են առանձին արժեքներին, դրանց այս կամ այն խմբի առնչությանը, ինչպես նաև հոգևոր և սոցիալական արժեքների համադրմանը [3, էջ 18]:

Ն.Ս.Ռոզովի կողմից փորձ է արվել մանրամասնորեն դասակարգել կրթության ոլորտի համար նշանակալի արժեքները: Նա առանձնացնում է.

- Մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտում:
- Մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին:
- Էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին, կենսական բազմազանությանը [4,էջ 162]:

Այդուհանդերձ, այդ դասակարգման մեջ առանձնացված չէ իմացական այն արժեքների խումբը, որոնք, անկասկած, մեծ նշանակություն ունեն կրթության ոլորտում: Միաժամանակ բարոյական և բարոյագիտական արժեքները ամփոփված են մեկ խմբում, ինչը դժվարացնում է մանկավարժական

գործընթացի կազմակերպումը: Մեր կարծիքով՝ մշակութային արժեքների խմբում օրինաչափ է գեղագիտական արժեքների առանձնացումը, քանի որ արվեստի, գրականության, կրոնի ազդեցությունը անձի ներաշխարհի վրա դեռևս լիարժեքորեն չի բավարարում անձի գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկի նկատմամբ նրա հակումները:

Ա.Հ. Մասլովի կողմից առաջարկվող դասակարգման մեջ առանձնացվում են արժեքների հետևյալ խմբերը.

- բարոյական
- իմացական
- կրոնական
- գեղագիտական
- սոցիալական
- բարոյականային
- նյութական [5]

Նա արժեքները հարմարեցնում է կրթության բովանդակությանն ու ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը:

Ուսուցման գործընթացում գերակայող արժեքներ

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են նաև միջանձնային հարաբերությունները կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես

դրական, այնպես էլ բացասական մոդելներ: Ընդ որում, բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործել ըստ նպատակի:

Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության ձևակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի և միջոցների օգտագործում: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ

գործընթացի իմացական-ճանաչողական, աֆֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը: Դա բազմիցս արտացոլվել է և՛ մանկավարժական, և՛ հոգեբանական հետազոտություններում (Մ.Սմիթ, Օ.Ա.Տիխոմանդրիցկայա, Տ.Ս.Անիսիմովա, Ն.Ե.Շչուրկովա և այլք):

Իմացական բաղադրատարրերը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորված է իմացական-ճանաչողական գործընթացների, սոցիալական փորձի արդյունքում:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի աֆֆեկտիվ բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները: Վարքային բաղադրատարրերը ներկայացնում են անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները:

Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներն են, դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում [1, էջ 5]:

Ըստ Ս.Ի. Մասլովի՝ արժեքների յուրացումը իրականանում է երեք աստիճանով՝

- առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ, սկզբում սովորողը ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն՝ իր հուզական-զգայական ոլորտի մակարդակի համեմատ,
- երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ,
- երրորդ աստիճանում իրականանում է սովորողի արժեքային կողմնորոշման մեջ արժեքի ներմուծման, այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման այսօրինակ հետևողականության և տրամաբանության համար, համաձայն Ս.Ի. Մասլովի, առաջարկվում է կրթության բովանդակության հուզական-արժեքային բաղադրատարրերի յուրացման ընդհանուր և դիդակտիկական մեթոդների այսպիսի համակարգ՝

- համարժեք հույզերի մեթոդ
- հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդ
- հուզական-արժեքային հակադրությունների մեթոդ [5, էջ 96]

Համարժեք հույզերի մեթոդն այն է, որ սովորողներին մղում է օբյեկտի նկատմամբ հուզական անդրադարձի ուսումնասիրման և ճանաչողական գործունեության: Այն թույլ է տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացնել դրանց յուրացման առաջին աստիճանում:

Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդը հնարավորություն է ընձեռում սովորողների կողմից գիտակցել յուրացվող արժեքների նշանակությունը: Այն սովորողների կողմից իրենց ապրումների կամ ուսումնասիրված օբյեկտի նկատմամբ դրական հարաբերությունների ձևավորմանն ուղղված տարբեր միջոցների կազմակերպումն է: Հույզերի և արժեքների շեշտադրումն իրականցվում է արժեքների յուրացման գործընթացի երկրորդ աստիճանում, որտեղ արժեքների հուզական ընկալումն ամրապնդվում է սովորողների իմացաճանաչողական ոլորտի վրա ակտիվ ազդեցությամբ, որոնցից են ներշնչանքը, համոզմունքը, գնահատումը: Դպրոցական ուսուցման ընթացքում դրանց օգտագործման հնարավորություններն ուսումնասիրվել են դաստիարակությանը նվիրված արտասահմանյան տարբեր տեսաբանների և հետազոտողների կողմից (Դ.Սյուպեր, Լ.Ռաթս, Մ.Հարնին, Ս.Սայմոն[6, էջ 554], Ս.Կազանկին, Ա.Վ. Կիրյակովա և այլք):

Համոզմունքները՝ որպես անձի գիտակցված պահանջմունքներ, կապված են իրականության նկատմամբ գիտակցված և քննադատական վերաբերմունքի

ձևավորման հետ [6, էջ 456], ներշնչանքի մեջ խթանում են այս կամ այն իրավիճակի վերաբերյալ սպասված ապրումները: Գնահատումը անձի գործունեության համար օբյեկտի նշանակության բնութագրումն է՝ նրա պահանջմունքերի բավարարման նպատակով: Այն դրսևորվում է անձի արդեն ձևավորված նախասիրությունների հիման վրա: Արժեքային կողմնորոշումների ձևավորման ընթացքում մեծ դեր է խաղում մանկավարժական գնահատումը, որը կանխատեսում և մեծ չափով նախապատրաստում է սովորողների արժեքների յուրացման աստիճանը [7, էջ 97-100]:

Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին; Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների ու դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը [5, էջ 97-98]: Սովորողների կողմից արժեքների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը:

Ընտրությունը փոխադարձ բարդ համագործակցային գործընթաց է, որում առկա են հուզակամային և ռացիոնալ բաղադրատարրերը, այսինքն՝ արարքի հուզական ընկալումից մինչև տրամաբանական իմաստավորում: Դա կապակցված է ապրումների և դրդապատճառների պայքարի հետ և բարենպաստ ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ավելի խորը ու արդյունավետ ձևավորման հետ:

Սովորողների հետ նշված մեթոդները կիրառվում են՝ հաշվի առնելով լեզվական ցիկլի առարկաների յուրահատկությունները: Դրանցում առկա լեզվական նյութում հուզական ամենաբարձր և արժեքային շեշտադրումները կարող են արտահայտվել երկակիորեն՝ լեզուն ինքնին ազգային մշակույթի արտահայտման ձև է, երկրորդ՝ դա այն աշխարհն է, որը շրջապատում է մեզ իր ողջ բարդությամբ, կապերով ու

փոխհարաբերություններով: Լեզվական նյութի առանձնահատկությունների հաշվառումը, դասավանդման նոր մեթոդներն ու ավանդույթները շեշտադրում են ընդհանուր դիդակտիկական մեթոդների որոշակիացման անհրաժեշտությունը: Խնդրին այսպիսի մոտեցումը նպաստում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման ժամանակ ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառմանը: Այս մոտեցումը մշակվել է հայրենական և արտասահմանյան մանկավարժական գրականության մեջ Լ.Անդերսոնի, Ջ.Բլումի, Թ.Գիլբերտի, Վ.Պ.Բեսպալկոյի, Ս.Ի. Ումանի և այլոց կողմից: Այս տեսության հիմնական մեթոդաբանական դրույթները հիմնվում են ուսուցման կառուցվածքի մասին այն պատկերացումների վրա, որոնք առաջարկվել են Ի.Յա.Լերների, Վ.Վ.Կրաևսկու կողմից և համահունչ են մեր հետազոտության մեջ արծարծվող տեսակետին:

Տեխնոլոգիական մոտեցումը հնարավորություն է ընձեռում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը դիտարկել որպես ուսումնական առաջադրանքների համալիր, որոնց կիրառումն ուղղված է սովորողների կողմից ուսուցանվող հայոց լեզվի և գրականության առարկաներում ամփոփված արժեքների յուրացմանը: Տեխնոլոգիական մոտեցման տեսանկյունից ուսումնական առաջադրանքները հիմնական դիդակտիկական հասկացություններ են: Ըստ ուսուցման նկատմամբ տեխնոլոգիական մոտեցման՝ ուսումնական առաջադրանքներում արտացոլվում են՝

- կրթության բովանդակությունը, որն առկա է առաջադրանքի ձևերում և դրա իրականացման նպատակներում,
- ուսուցչի գործունեությունը, որը ընկած է աշակերտին սոցիալական փորձի հաղորդման հիմքում,
- սովորողների՝ սոցիալական փորձի յուրացմանն ուղղված գործունեությունը, որն ընկած է առաջադրանքի կատարման գործընթացի հիմքում [8, էջ 70]:

Ուսուցման ընթացքում կիրառվող առաջադրանքները որոշակիորեն համակարգվում են ըստ հետևյալ երկու փուլերի՝

1. առաջադրանքերի առանձնացում ըստ տեսակների, դրանց դասակարգում
2. առաջադրանքերի կազմակերպում ժամանակի առումով, այսինքն ուսուցման գործընթացի կազմակերպում որոշակի ժամանակահատվածում՝ ըստ դրանց կազմակերպման հաջորդականության [8, էջ 72-83]:

Դիդակտիկայում առանձնացնում են առաջադրանքների հետևյալ տեսակները՝

- վարժությունը առաջադրանքի այն տեսակն է, որը բնութագրվում է ուսուցչի կողմից լուծման միջոցների հուշմամբ, որը և բնութագրում է աշակերտի գործունեության մեխանիկական բնույթը,
- խնդիրը առաջադրանք է, որն արտացոլում է աշակերտի ինքնուրույն գործունեությունը և պայմանավորում է այդ գործունեության ստեղծագործական բնույթը,
- հարցը խնդրի կամ առաջադրանքի տարատեսակ է, որն առաջադրանքը ներկայացնում է հարցման ձևով [8, էջ 83]:

Սովորողներին ուսուցման ընթացքում Հայոց լեզու և Գրականություն առարկաների ուսուցման ընթացքում առաջադրանքերը ունեն յուրահատուկ նշանակություն: Քերականական և խոսքի կառուցման առաջադրանքների կատարման ժամանակ ուսուցչի գործունեությունը հաճախ ստեղծագործական բնույթ ունի: Լեզուների ուսուցման մեթոդիկայում լայնորեն օգտագործվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք սովորողներին հաղորդակցում են գրական ստեղծագործություններին, նպաստում են ինքնուրույն խոսքի կառուցմանը, բառապաշարի հարստացմանը,

հոմանիշ-հականիշերի օգտագործմանը, ինքնարտահայտմանը, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: [9, էջ 171]:

Այսպիսով՝ սովորողները դպրոցում Հայոց լեզու և Գրականություն առարկաների առաջադրանքների կատարման ժամանակ յուրացնում են արժեքներ՝ արտացոլված տվյալ նյութի բովանդակության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կարելի է ասել, որ արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում դրական արդյունքերի հասնելու համար մեծ նշանակություն ունի նրա բաղադրատարրերից յուրաքանչյուրի վրա արդյունավետ ներգործությունն ու դրանց նպատակային փոխազդեցությունը:

Գիտական շատ հետազոտություններում արծարծվում է այն միտքը, որ դպրոցականների կողմից արժեքների արդյունավետ յուրացմանը նպաստում է ուսուցչի գործունեության կազմակերպումը, որն անմիջականորեն ներգործում է աշակերտների իմացական և հուզական ոլորտների վրա:

Սովորողների արժեքային կողմնորոշումները սկզբնական շրջանում ձևավորվում են նաև սուր աֆֆեկտիվ իրավիճակների միջոցով՝ առանց որևէ իմացաճանաչողական էական հիմնավորումների: Ս.Ի. Մասլովը գրում է. «Մի շարք պատճառներով անհնարին է իրականացնել արժեքների յուրացումը իմացական գործընթացների միջոցով. նախ՝ ժամանակը պարզապես չի բավարարի, երկրորդ՝ շատ արժեքներ դեռևս անհասանելի են դպրոցական ցանկացած տարիքի սովորողի գիտակցությանն ու հասկացողությանը: Սովորողները շատ արժեքներ կարող են յուրացնել հուզական ընկալման միջոցով» [5, էջ 49-50]: Այսպիսով, սովորողների կողմից արժեքների հուզական ընկալումն իրականանում է ըստ նրանց նշանակության գիտակցման և անձի վարքային դրսևորումների:

Ամփոփելով՝ փաստենք, որ Հայոց լեզու և Գրականություն առարկաների ուսուցման ժամանակ սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման յուրահատկությունների բացահայտումը ենթադրում է՝

- ուսումնասիրվող լեզվական և գրականագիտական նյութի բովանդակության մեջ գերակա արժեքների արտացոլում և դրանց առանձնահատկությունների դիտարկում,
- սովորողների գործունեության կազմակերպման ձևերի, միջոցների և եղանակների դասակարգում, արժեքակողմնորոշիչ առաջադրանքների դիտարկում:

Առաջադրանքների դասակարգումն այս տեսակետից ենթադրում է այնպիսի մեթոդների կիրառման հնարավորություն, որոնք ուսուցման գործընթացում իրականացնում են կրթության բովանդակության արժեքային բաղադրատարրեը:

Այսպիսիով՝ ուսումնասիրվող գործընթացի գիտական նախադրյալների առանձնացումը հնարավորություն է տալիս այդ գործընթացը դիտարկել բովանդակային և գործառնական բաղադրատարրերի միասնության մեջ:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունը ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված ենՀայոց լեզու և Գրականություն առարկաների նպատակների, սովորողների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Н.О. Лосский. Характер русского народа.-М.: “Поссев”, 1957.-64с.,
2. Б.С.Гершунский.Философско-методическое основания стратегии развития образования. М.: Изд-во РАО. 1993.-160с.
3. В.П. Зинченко. О целях и ценностях образования. /Педагогика.-1997.-5.-с.3-16/
4. Н. С. Розов. Культура, ценности и развитие образования.-М.: Иследовательный центр, 1992.-54с.
5. С. И. Маслов. Эмоционально-ценности образование, г. Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.-130с.
6. Российская педогогическая эницикловедия: в 2т.-М.: Большая Российская Энциклопедия, 1999.-т.2,-672с.
7. А.В. Кирякова.Ориентация школьников на социально значимые ценности. Л.: 1991.-445с.
8. А.И. Уман. Технологический подход к обучению: теоретические основы.-Москва-Обел: МПГУ им. В.И. Ленина, ОГУ, 1997.-208с.
9. М.Р.Львов. М.: “Академия”, 2000.-472с.